բաբաղում, ապրել ստորին հարկում, որտեղ ավելի հեշտ է շենքը տաքացնել, իսկ ամառը՝ քնել վերին հարկի պատշգամբում՝ հին սովորություն, գետնին մոտիկ վխտող մոծակներից, մժեղներից, բակում ազատ շրջող անասունի այցելությունից ազատ մնալու համար։ Քնում էին ղարադամի կտրանը, որտեղ և ավելի զով էր լինում։ Նոր տիպի այդպիսի տները ձմեռը տաքացվում են թիթեղե վառարաններով։

Երկար, անյէրթիկ, պատերի մեջ բացած լուսամուտներով տները գերիշխում են մանավանդ Ողջի (Օխչի) և Բասուտ գետերի հովիտներում, որտեղ ղարադամը վաղուց մոռացված է կամ երբեք չի եղել։ Այստեղ պատշգամբները նեղ են, սենյակներն էլ նեղ, ինչպես և Հարևան Մեղրու շրջանում[22], որտեղ այդպիսի տները շատ վաղ ժամանակներից, դեռ այժմյան բնակիչների պապերի օրով, սկսել էին արագ տարածվել զուտ հին մեղրական ձևի տների կողքին։ Դժվար է պարզել՝ արդյոք այդ երկար և անյէրթիկ տների ճարտարապետությունը մշակվել է տեղում, թե՞ մտել է դրսից։ Վերջինս շատ հավանական է, քանի որ մեղրեցի, ինչպես և հարևան ագուլեցի և վանանդեցի վաճառականները, մանավանդ XVI և XVII դ. մշտական հարաբերություն էին պահպանում ռուսական և եվրոպական առևտրական և արդյունաբերական կենտրոնների հետ, երկար ապրում էին այնտեղ, ընտելանում էին այնտեղի տների մեջ բնակվելուն և վերադառնալով հայրենի գյուղերը՝ իրենց հետ այնտեղի տնային իրերի հետ բերում էին նաև ճարտարապետական նոր պահանջներ։ Թե որպիսի դժվարությամբ էր այդ ոճը— առաստաղը հարթ, լուսամուտները պատերի մեջ, երկար և նեղ պատշգամբը տարածվում Մեղրու շրջանից դեպի հյուսիս, երևում է այն փաստից, որ 1836 թ. Խնձորեսկում իր շենքը վերակառուցելիս Մելիք Փարմազը, արդեն ռուսական տիրապետության հաստատվելուց հետո, կանգ է առել նորից ղարադամնավոր ձևի վրա և իր երկհարկանի նոր կառուցումը ծածկել է քարե թաղով, վախվխելով բաց է արել իր այդ ընդունարանում պատերի մեջ փոքրիկ լուսամուտներ և հրաժարվել է պատշգամբից։ Մեղրական տիպի հին բնակարաններում մեծ ուշադրություն է դրավում բուխարին, որը գեղեցիկ ձևավորված է լինում մեծ մասամբ պարսկական ոճով։ Այդպիսի մի բուխարի ունեցել է և Մելիք Փարմազի ընդունարանը։ Նմանը պահպանվել էր և 1931 թ. երկրաշարժից կործանված մի տան մեջ Գորիսում։

Զանգեզուրն էլ, ինչպես մեր հանրապետության այլ գավառներն, այժմ ապրում է ժողովրդական բնակարանի նոր ճարտարապետական ձևավորման որոնման շրջան։ Հին ձևերն արդեն չեն կարողանում բավարարել նոր թե՛ կուլտուրական և թե՛ մանավանդ տնտեսական պահանջներին, առավելապես կոլեկտիվ տնտեսության հաղթանակից հետո։ Վերջին երկրաշարժից հետո անմիջապես դրվեց ավերման ենթարկված գյուղերի վերապլանավորման խնդիրը, դրա հետ միաժամանակ դրվեց նոր կյանքին հարմարեցրած ժողովրդական տան խնդիրը։ Այդ ուղղությամբ մի քանի փորձեր են կատարվում։ Շտապ կառուցվեցին ճարտարապետների առաջարկած հատակագծերով շենքեր Խնձորեսկում, Շինուհայրում (Շնեհերում), Սիսիանում (Սիսավանում), Ողջիում (Օխչիում), Գորիսում և հայկական ու ադրբեջանական մի շարք գյու-

---

[22] Տե՛ս իմ հոդվածը՝ Мегринское крестьянское жилище, „Известия" КИАИ, т. V, Тифлис, 1927.